

**«ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՀՀ-02-2022**

ք. Երևան

11 մարտի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող՝ գլխավոր քարտուղար Մ. Մարգարյանի, մի կողմից և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կարեն Ղազարյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 201-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1168 Արվեստների ծրագրի «Մարզահամերգային համալիրի պահպանություն» թիվ 11010 դասիչով միջոցառման (այսուհետ՝ «Միջոցառում») իրականացման նպատակով Նվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված համամասնություններով, սեփականության իրավունքով, Նվիրառուին անհատույց հատկացնել 57 448 300 (հիսունյոթ միլիոն չորս հարյուր քառասունութ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Նվիրառուն պարտավորվում է Միջոցառումն իրականացնել սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների նկարագրությամբ (այսուհետ՝ «Աշխատանքներ»)՝ Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը,

2.1.2 որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը՝ սեփական հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Նվիրառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 4-րդ բաժնում նախատեսված տուգանքը,

2.1.3 առանց կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե՝

ա. Նվիրառուն ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ Միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի կարող պատշաճ իրականացվել,

բ. Նվիրառուն երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառումով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. կատարված Աշխատանքների արդյունքները չեն համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին,

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքները:

2.1.5. Նվիրատուն Նվիրառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Նվիրառուն համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև Նվիրառուի էլեկտրոնային փոստին:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. կատարել Միջոցառման (դրա որևէ մասի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.2.2. իրականացնել Միջոցառումով նախատեսված այլ աշխատանքներ,